
ՀԱՅԵՐԵՆԱԳԻՏԱԿԱՆ XI ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝
ՆՎԻՐՎԱԾ ՋՈՆ ԳՐԵՊԻՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

2017 թ. հոկտեմբերի 2-5-ը Երևանում կայացավ Հայերենագիտական միջազգային XI գիտաժողովը, որը նվիրված էր ամերիկացի լեզվաբան, հայագիտության երախտավոր Ջոն Գրեպինի հիշատակին: Գիտաժողովին մասնակցում էր աշխարհի 11 երկիր ներկայացնող շուրջ 60 հետազոտող: Նպատակն էր՝ իրարմեջ հայագիտության զարգացումն իր բոլոր բնագավառներով, ի մի բերել ու գիտական շրջանառության մեջ դնել նորագույն ուսումնասիրությունների արդյունքները, նաև կազմակերպել այս ոլորտի մասնագետների փոքրձի փոխանակումը:

Համաժողովը մեկնարկեց ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում՝ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն Վ. Կատվալյանի բացման խոսքով: Նա մասնավորեց համաժողովի և՛ կենտրոնաձիգ, և՛ տարածական ուժը, հատկապես հայագիտության դեպի միջազգայնացում ուղղվածությունը: Իր ելույթում շնորհակալության խոսքեր փոխանցեց համաժողովի աջակիցներին՝ ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեին, Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանին, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի լեզվաբանության ինստիտուտին: Համաժողովի կարևորությունը նշանավորվեց ՀՀ սփյուռքի նախարար Հ. Հակոբյանի ողջույնի խոսքով, որը փոխանցեց Վ. Կատվալյանը:

Այնուհետև գիտաժողովի աշխատանքներն ընթացան մի քանի թեմատիկ ուղղություններով՝ հայոց լեզվի պատմության, բարբառագիտության, ընդհանուր և համեմատական լեզվաբանության, արդի հայերենի: Հարկ է, սակայն, նշել՝ այս բաժանումը որոշ չափով պայմանական էր, քանի որ յուրաքանչյուր մասնաճյուղի թեմատիկ ընդգրկումը շատ ավելի լայն էր: Զեկուցումների մեծ մասը նվիրված էր հայոց լեզվի կառուցվածքի բոլոր մակարդակների համեմատական քննությանը՝ հնչյունաբանության, բառագիտության, ձևաբանության, շարահյուսության, իմաստաբանության (Լ. Բարոնյան, Հ. Մարտիրոսյան, Վ. Կազարյան, Ա. Տրոֆիմով, Ն. Ռոյեր-Արթուրո, Մ. Ֆրից, Կ. Հոդսոն): Փոքր-ինչ լայնորեն քննարկվեցին հայերենի համեմատական հնչյունաբանության և ձևաբանության հարցերը (Ա. Սքալա, Ջ. Շիրու, Օ. Վոլոշինա):

Համեմատական դիցաբանության հայեցակետից՝ հայ հոգևոր մշակույթի պատմությանն էին նվիրված Ս. Զուլյանի, Ա. Պետրոսյանի և Վ. Առաքելովայի զեկուցումները:

Զեկուցումների մի ամբողջ շարք նվիրված էր գրավոր հուշարձանների լեզվական և բանասիրական քննությանը (Ս. Գրիգորյան, Կ. Սեմյոնովա, Ք. Հարությունյան, Խ. Հարությունյան, Փ. Հարությունյան, Տ. Սիրունյան): Ելույթ ունեցողները բնագրագիտական հետազոտությամբ պարզում էին գրավոր աղբյուրների ստեղծման ժամանակաշրջանի, կառուցվածքի, նախօրինակների և լեզվական առանձնահատկություններին առնչվող հարցեր:

Հայոց լեզվի պատմության նախորդ փուլերի բառապաշարի ուսումնասիրության տեսանկյունից շահեկան էին Ք. Հարությունյանի, Խ. Հարությունյանի, Ն. Դիլբարյանի, Տ. Դալալյանի, Գ. Արեշյանի զեկուցումները: Գրաբարի պատմական զարգացման, գրաբարի և աշխարհաբարի վերաբերյալ ուշագրավ դիտարկումներ ներկայացրեց Ն. Պողոսյանը:

Լայնորեն քննարկվեցին պատմական տարբեր ժամանակաշրջաններում հայերենի և այլ լեզուների շփումների ու փոխհարաբերությունների հարցերը: Այդ տեսանկյունից առանձնանում են Գ. Ասատրյանի, Ա. Համբարձումյանի, Ռ. Գորգաձեի, Հ. Կիրակոսյանի, Ա. Տրոֆիմովի հետազոտությունները, որոնցում հայ-իրանական լեզվական առնչությունները քննվում են զուգադրական-տիպաբանական հայեցակետով:

Ուշագրավ էին հայ բարբառագիտությանը նվիրված զեկուցումները: Ինքնատիպ հետազոտությամբ հանդես եկավ Վ. Կատվալյանը՝ ներկայացնելով Վանի բարբառի դրսևորումները ՀՀ Կոտայքի մարզում: Աբովյանի շրջանի մի քանի գյուղերի հնչյունական համակարգերի նկարագիրը ներկայացրեց Ժ. Միքայելյանը: Նշվեցին միջին հայերենի բարբառային տարբերակվածության լեզվական և պատմահասարակական նախադրյալները (Գ. Մկրտչյան): Դիտարկումներ եղան դասական հայերենի բարբառների վերաբերյալ (Ջ. Քլաքսոն):

Ժամանակակից հայերենին նվիրված զեկուցումները ևս աչքի էին ընկնում թեմատիկ բազմազանությամբ՝ արևմտահայերենի կորպուսի ստեղծում (Ա. Դոնապետյան), խոսքային գործունեության իմաստային ենթադաշտի տեսական հիմնավորում (Ռ. Դոխոյան), համակարգչային լեզվաբանությանն առնչվող “Արևելահայերենի շարահյուսական վերլուծիչ ու շարահյուսական ծառերի շտեմարան” նախագիծ (Մ. Յավրումյան, Հ. Խաչատրյան, Ա. Դանիելյան, Գ. Առաքելյան), “Պարսկաստանում ապրող հայ” հասկացության նշանակող բառերի (պարսկահայ, իրանահայ,

թեհրանահայ) իմաստակառուցվածքային և բառարանագրական քննություն (Դ. Գյուրջինյան), բանաստեղծական խոսքի տաղաչափության քննություն (Վ. Պլունգյան, Բ. Ջուլումյան):

Մասնաճյուղային նիստերն ընթանում էին բուռն քննարկումներով, կարծիքների և տեսակետների արծարծումով:

Գիտաժողովը կարևոր էր նաև ճանաչողական տեսանկյունից, քանի որ հայագետները եղան Գառնիում, Գեղարդում, Նորավանքում, Խոր Վիրապում, այցելեցին պատմամշակութային հուշարձաններ:

Ամփոփելով գիտական քառօրյան՝ Վ. Կատվայանը նշեց, որ Լեզվի ինստիտուտը հատուկ ուշադրություն է դարձնում տարբեր երկրների հետ գիտամշակութային հարաբերությունների հաստատմանն ու ամրապնդմանը, շեշտեց հայերենագիտությանը նվիրված նյութերի ուսումնասիրության և դրանց արդյունքները գիտական լայն շրջանակներին հասու դարձնելու կարևորությունը:

Այսպիսով, կարելի է արձանագրել.

ա) գիտաժողովի ընթացքում մասնագիտական բաժանմունքներում տեղի ունեցավ 9 նիստ, կարդացվեց 60 զեկուցում, որոնցից 31-ը արտասահմանից ժամանած հայագետների կողմից,

բ) գիտաժողովն ամփոփեց վերջին տարիներին հայերենագիտության ասպարեզում տարվող աշխատանքների արդյունքները, ակնհայտ դարձրեց այն փաստը, որ զգալիորեն աճել է ինչպես հանրապետական, այնպես էլ օտարերկրյա հետազոտողների գիտական հետաքրքրությունը հայերենի նկատմամբ,

գ) բացահայտեց հայագիտության հետագա առաջընթացի հեռանկարները,

դ) ցույց տվեց, որ ներկայումս հայոց լեզուն ուսումնասիրվում է ժամանակագրական, տարածական ու գործառական տարբերակների ամբողջությամբ՝ լեզվաբանական տարբեր գիտակարգերի և ուղղությունների հայեցակետից:

ԳԱՅԱՆԵ ՄԽԻԹԱԼՅԱՆ